Հավելված N 4
ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու
2022 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 151-Ա որոշման

# ՀԱՅՏ

## Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանումը** | *Պատմական Հին Գորիս տանող ճանապարհի հիմնանորոգում* |
| **Մարզ** | *ՀՀ Սյունիքի մարզ* |
| **Համայնքը /համայնքները** | *Գորիս խոշորացված համայնք: Բնակավայրերը՝ Խնձորեսկ, Ներքին Խնձորեսկ, Հարթաշեն, Վերիշեն, Ակներ, Որոտան, Քարահունջ, Շուռնուխ, Բարձրավան:* |
| **Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից** | *Գորիսը գտնվում է Սյունիքի մարզի հյուսիս-արևելյան հատվածում: Համայնքի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից՝ 240 կմ, մարզկենտրոն Կապանից՝ 67 կմ:* |
| **Համայնքի /բնակավայրի բնակչությունը** | *Համայնքի տարածքը կազմում է 31969.28 հեկտար, բնակչությունը՝ 29721 մարդ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 1398 մ:* |
| **Սահմանամերձ համայնք/բնակավայր** | *Գորիսը սահմանամերձ համայնք է:* |
| **Բարձր լեռնային համայնք /բնակավայրի** | *Գորիսը բարձր լեռնային համայնք է:* |
| **Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն** | *Համայնքն ունի կադաստրային քարտեզ, որը գյուղական բնակավայրերի համար հանդիսանում է գլխավոր հատակագիծ: Հատակագիծը հաստատվել է 2002 թվականին:* |
| **Համայնքի և ծրագիր իրականացվող բնակավայրի/բնակավայրերի ենթակառուցվածքների վերաբերյալ համառոտ** | *Գորիսն ունի 95 % լուսավորության ծածկույթ, այժմ անցնում է լուսավորման էներգաարդյունավետ կառավարման՝ նպատակ ունենալով էներգաարդյունավետության բարձրացման միջոցով խնայել էներգիան և կրճատել ջերմոցային գազերի արտանետումները: Քաղաքը գազաֆիկացված է, ունի 24 ժամյա ջրամատակարարում: Գազամատակարարումից* |

| | |
|---|---|
| տեղեկատվություն՝ հստակ նշելով՝ | *օգտվողների թիվը կազմում է 90 % : Ոռոգման համակարգից օգտվողների թիվը՝ 70 % :* |
| - ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և ջրամատակարարման տևողությունը,<br><br>- գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը,<br><br>- ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը,<br><br>- լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե ոչ | |
| Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը | *Ներկայումս պատմաճարտարապետական հուշարձաններով և ավանդույթներով հարուստ Հին Գորիսի պահպանումը և շահագործումն առաջնահերթություն է: Հին Գորիսը ազգային կարևորության* |

| | |
|---|---|
| | պատմամշակութային հուշարձան է: Այն իրենից ներկայացնում է բնական և ճարտարապետական հուշարձան: |
| | Սյունիքի պատմական և մշակութային հուշարձանների պաշտոնական ցանկում ներառվում է Սուրբ Հռիփսիմե եկեղեցին, Մելիքի եկեղեցին, 52 բնակավայրային քարանձավները, ամֆիթատրոնը, քարվանսարան, բնակելի ժայռապատ բլուրը, Ձագեձորի բերդը, Վարարակն գետի վրա անցնող կամրջի վրա նավթամղիչ կայանը, հին գերեզմանատունը և բազմաթիվ տապանաքարեր և խաչքարեր: Ուստի կարևոր է դեպի այս պատմական նշանակության բնակատեղի տանող ճանապարհի հիմնանորոգումը: Թեև Հին Գորիս տանող ճանապարհը կարևոր նշանակություն ունի, սակայն այն ներկայումս գտնվում է դժվարանցանելի վիճակում և անհրաժեշտ է այն վերականգնել:<br><br>Քաղաքի պատմական միջուկի վերականգնման ծրագրեի շրջանակներում ամբողջովին վերականգնվում են փողոցները, հին տների արտաքին տեսքը, պատշգամբները, կարմիր տանիքները, ծրագրի տրամաբանական շարունակությունը ապահովելու նպատակով, կարևոր է վերականգնել նաև դեպի Հին Գորիս տանող ճանապարհը: Գորիս եկող զբոսաշրջիկների հիմնական այցելատեղին Հին Գորիսն է, և որպես այցեքարտ՝ հրատապ է դեպի պատմական բնակատեղի տանող ճանապարհի հիմնանորոգումը:<br><br>Հաշվի առնելով նշված ճանապարհի նշանակությունը, անհրաժեշտություն է առաջանում պատշաճ ուշադրություն դարձնել և քայլեր ձեռնարկել վերակառուցման ուղղությամբ: Այս առումով առաջնահերթ են նաև ծրագրով հիմնանորոգման ներկայացվող ճանապարհների բարելավման, ենթակառուցվածքների արդիականացման և այլ խնդիրների լուծումը: |
| **Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին** | Հին Գորիսի վերականգնման օգուտները կլինեն թե՛ սոցիալական և թե՛ մշակութային: Անհատ ներդրողները նույնպես կարող են օգուտ քաղել ծրագրից: Զբոսաշրջային կենտրոնի ստեղծումը կխթանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը: Տարածքի վերականգնման արդյունքում կզարգանա զբոսաշրջությունը, կակտիվանա քաղաքային կյանքը և |

| | |
|---|---|
| | կստեղծվեն նոր աշխատատեղեր տեղի բնակիչների համար, կստեղծվի միջավայր, որը կապահովի հուշարձանների պահպանում: |
| | ➢ Լուծվել է համայնքի կարևոր նշանակության ճանապարհների հիմնանորոգման խնդիրը:<br>➢ Թաղամասի ճանապարհների անանցանելիության խնդիրը լուծվել է:<br>➢ Աշխուժացել է ճանապարհի երկայնքով տեղակայված տարբեր ենթակառուցվածքների գործունեությունը, ավելացել է շահութաբերությունը, ընդլայնվել են բիզնես հնարավորությունները: |
| **Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները** | • Պատմական Հին Գորիս տանող ճանապարհի հիմնանորոգում Նախագծային և նախահաշվային աշխատանքների իրականացում:<br>• Գնման գործընթացի կազմակերպում:<br>• Շինարարական աշխատանքների կազմակերպում՝<br>❖ Ճանապարհի ասֆալտապատում /1663գծմ/:<br>❖ Հենապատի կառուցում /80 գծմ /:<br>❖ Մայթերի ասֆալտապատում և սալիկապատում /720քմ/:<br>❖ Փողոցի երկայնքով անցնող ոռոգման առուների վերակառուցում /488գծմ/:<br>❖ Ճաղավանդակի կառուցում /224գծմ<br><br>Ճանապարհի հանձնում և համայնքի բյուջեով պահպանման ծախսերի նախատեսում: |
| **Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում բացառությամբ բազմաբնակարան շենքերի** | Բարելավվող ենթակառուցվածքները համայնքային սեփականություն են և կընդգրկվեն հիմնական միջոցների հաշվեկշռում: |

| | |
|---|---|
| **ընդհանուր բաժնային սեփականության գույքի** | |
| **Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա** | *Շահառուների քանակը*<br>▪ *Ծրագրի անուղղակի շահառուներն են Գորիս համայնք եկող զբոսաշրջիկները:*<br>▪ *Առաջնային շահառուները թաղամասի բնակիչներն են, որոնց կապը համայնքի հետ դարձել է դյուրին:*<br>▪ *Զգալի ավելացել են սպասարկման օբյեկտների ծառայություններից օգտվողների թիվը:*<br>▪ *Հին Գորիս պատմական տարածքի վերականգման ուղղությամբ ներդրումների ակտիվությունը մեծացել է:*<br>▪ *Հին Գորիսի պատմամշակութային ժառանգության հանրահռչակումը դարձել է առավել դյուրին:*<br>*Թաղամասում գործունեություն ծավալող բիզնեսների եկամտաբերությունը աճել է:* |
| **Նշել ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական աշխատատեղերի քանակը և դրանց նկարագրությունը** | *Ծրագրի իրականացման ընթացքում*<br>*Նպաստավոր պայմաններ կստեղծվեն նոր բիզնեսների համար.*<br>✓ *Զբոսաշրջության ոլորտում ծառայություն մատուցողների շահութաբերությունը կավելանա:*<br>✓ *Նոր ծառայությունների ավելացման հնարավորություն կստեղծվի՝ նոր աշխատատեղերի հնարավորությամբ:*<br>*Շինաշխատանքներում կներգրավվեն 30-ից ավել աշխատողներ:* |
| **Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը** | *Նախորդ տարվա բյուջեն՝* ***1 744 955 800*** *ՀՀդրամ.* |

Ներկայացնել նախորդ տարվա բյուջեն, ծախսերը և կատարողականը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:

| | Պլան | Փաստացի | Տոկոս |
|---|---|---|---|
| ***Ընդամենը համայնքի բյուջեի եկամուտները*** Այդ թվում՝ | 1 744 955 800 | | |
| - Վարչական բյուջեի եկամուտներ, որից | 1 190 246 600 | | |
| - Սեփական եկամուտներ | 252 274 600 | | |
| - Ֆոնդային բյուջեի եկամուտներ | 554 709 200 | | |
| ***Ընդամենը համայնքի բյուջեի ծախսեր,*** որից | 2 215 578 700 | | |
| - Վարչական բյուջեի ծախսեր | 1 194 951 000 | | |
| - Ֆոնդային բյուջեի ծախսեր | 1 020 627 700 | | |
| ***Համայնքի ֆոնդային բյուջեի ծախսերը,*** որից | | | |
| - Մեքենա սարքավորումների ձեռքբերման | 2 000 000 | | |
| - Ճանապարհային տրանսպորտ | 608 344 000 | | |
| - Շրջակա միջավայրի պաշտպանություն | 35 000 000 | | |
| - Ջրամատակարարում | 100 000 000 | | |

| | | | |
|---|---|---|---|
| - *Բնակարանային շինարարություն* | *83 997 400* | | |
| - *Գյուղատնտեսություն* | *8 283 700* | | |
| - *Փողոցների լուսավորություն* | *15 000 000* | | |
| - *Նախադպրոցական կրթություն* | *200 000 000* | | |
| | | | |

**Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն**

*2023թ.-բյուջեն* ***2 414 000 000*** *ՀՀ դրամ:*

*Ներկայացնել ընթացիկ տարվա կանխատեսվող եկամուտները, պլանավորված ծախսերը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից պլանավորված ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:*

| | **Պլան** |
|---|---|
| ***Ընդամենը համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում*** *Այդ թվում՝* | *2 414 000 000* |
| - *Վարչական բյուջեի եկամուտներ, որից* | *1 222 000 000* |
| - *Սեփական եկամուտներ* | *282 000 000* |
| - *Ֆոնդային բյուջեի եկամուտներ* | *1 192 000 000* |
| ***Ընդամենը համայնքի բյուջեի ծախսեր,*** *որից* | *2 414 000 000* |
| *- Վարչական բյուջեի ծախսեր* | *1 222 000 000* |
| *- Ֆոնդային բյուջեի ծախսեր* | *1 192 000 000* |
| ***Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը,*** *որից* | *1 192 000 000* |
| - *Մեքենա սարքավորումների ձեռքբերման* | *2 000 000* |

<table>
<tr><td></td><td><table>
<tr><td>-</td><td>Ճանապարհային տրանսպորտ</td><td>885 000 000</td></tr>
<tr><td>-</td><td>Շրջակա միջավայրի պաշտպանություն</td><td>20 000 000</td></tr>
<tr><td>-</td><td>Ջրամատակարարում</td><td>10 000 000</td></tr>
<tr><td>-</td><td>Նախադպրոցական կրթություն</td><td>275 000 000</td></tr>
</table></td></tr>
<tr><td>Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով</td><td>2023թ. բյուջետային տարում համայնքի բյուջեի ֆոնդային մասի մուտքեր կանխատեսվում են շուրջ 1 192 00 000 դրամի չափով, որոնք ձևավորվում են համայնքի սեփականությունը հանդիսացող ֆոնդերի օտարումից (հողի օտարումից), պաշտոնական դրամաշնորհներից և այլ նվիրատուներից, բյուջեի վարչական մասի տարեվերջյան ազատ մնացորդից:<br>Ընդամենը ֆոնդային բյուջեի ծախսերը կանխատեսվում է՝<br>1 192 00 000 դրամ, որից՝<br><br>2 000 000 – Մեքենա սարքավորումների ձեռքբերման<br><br>20 000 000 – Նախագծահետազոտական աշխատանքների համար<br><br>1 170 00 000 – Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում, որից՝<br><br>724 500 000 – Ընթացքի մեջ գտնվող կապիտալ ծրագրերի ֆինանսավորում<br><br>445 500 000 – Սուբվենցիոն ծրագրերի ֆինանսավորում՝ որից<br><br>54 000 000 - Թիվ 1 ՆՈՒՀ-ի հիմնանորոգում<br><br>171 000 000 - Պատմական Հին Գորիս տանող ճանապարհի հիմնանորոգում<br><br>81 000 000 - Գորիս քաղաքի Թումանյան փողոցի կապիտալ նորոգում<br><br>139 500 000 – Վերիշեն բնակավայրի մոտեցման գլխավոր ճանապարհի հիմնանորոգում:</td></tr>
<tr><td>Համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը</td><td>Համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիր առկա չէ</td></tr>
<tr><td>Ծրագրի ընդհանուր բյուջեն, այդ թվում՝</td><td>380. 000. 000 ՀՀ դրամ (100%)<br><br>7600000 ՀՀ դրամ</td></tr>
</table>

| | |
|---|---|
| - շինարարական օբյեկտների նախագծման արժեքը __________ դրամ, | 550000 ՀՀ դրամ |
| - նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ __________ դրամ, | 2850000 ՀՀ դրամ |
| - տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ __________ դրամ, | 1400000 ՀՀ դրամ |
| - հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ __________ դրամ, | 0 |
| - գոյություն ունեցող շենք-շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության արժեքը՝ __________ դրամ, | 1000000 ՀՀ դրամ |
| ինժեներաերկրաբանական հետազոտության ծառայության արժեքը՝ ——— դրամ | 0 |
| ինչպես նաև առանձին ներկայացնել հասարակական շենքերի և բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման գույքի կառուցման/նորոգման դեպքում՝ Էներգախնայողության միջոցառումների արժեքը __________ դրամ | |
| ***Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը*** | *171 000 000 ՀՀ դրամ (45%)* |

| | |
|---|---|
| **Այլ ներդրողներ** | .......... դրամ ( .... %), նշել ներդրողի անունը: |
| **Ծրագրի իրականացման տևողությունը** | Սկիզբը___01.03.2023թ. Տևողությունը ___6ամիս _______ |
| **Ծրագրի ծախսերը** | Մանրամասն ներկայացնել ծախսերը՝ կցելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նախագծանախահաշվային փաստաթղթերը: Ծրագրով նախատեսվող ծախսերը պետք է լինեն իրատեսական, ֆինանսական հաշվարկները և նախահաշիվները՝ հնարավորինս հստակ, հիմնավոր և մանրամասն: Մեքենա սարքավորումների ձեռքբերման դեպքում ներկայացնել հնարավորինս հստակ, հիմնավոր և մանրամասն տեխնիկական բնութագրերը, ֆինանսական գնահատականները և առնվազն երեք կազմակերպությունների կողմից տրված գնահարցումները: |
| **Ամսաթիվ** | 28.11.2022թ. |

**Այլ տեղեկություններ ծրագրի մասին** (նշել այն լրացուցիչ հանգամանքները, որոնք կարող են ցույց տալ ծրագրի կարևորությունը, ակնկալվող արդյունքների ազդեցությունը համայնքի և տարածաշրջանի զարգացման վրա, այլ հանգամանքներ, որոնք կարող են հաշվի առնվել ծրագիրը գնահատելու ընթացքում):

**Համայնքի տնտեսական պատասխանատու՝ Իրինա Յոլյան**
**Հեռախոսահամարը, Էլեկտրոնային փոստը՝ 055851110 / yolyan.irina@gmail.com**

**Համայնքի ղեկավար** **Առուշ Առուշանյան**

Կ.Տ.